



Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2024 թվականին քրեակատարողական հիմնարկներում սննդի ապահովման գործընթացի վերաբերյալ

Իրավական նախաձեռնությունների կենտրոնն ուսումնասիրել է քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի տրամադրման գործընթացը: Ըստ Քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության՝ յուրաքանչյուր տարի «Գնումների մասին» օրենքի համապատասխան հայտարարվում է մրցույթ՝ ազատազրկված անձանց սննդի ապահովման գործընթացի կազմակերպման նպատակով, որում հաղթող ճանաչված ընկերության հետ կնքվում է համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր: Նշված ընթացակարգի պահպանմամբ՝ Քրեակատարողական ծառայության և «Բնական բարիքներ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի նոյեմբերի 29-ին կնքվել է քրեակատարողական հիմնարկների կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման թիվ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-25/1» պայմանագիրը: Ըստ այդմ՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկված անձանց տրամադրվող սննդի ապահովումը 2024 թվականի դեկտեմբերի 26-ից իրականացվում է «Բնական բարիքներ» ՍՊԸ-ի կողմից, իսկ 2024 թվականի ընթացքում սննդի ապահովման գործընթացն իրականացվել է «Էլիտ Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից: Մատակարար կազմակերպության կողմից սննդի ապահովումը ներառում է դրա ձեռքբերման, պատրաստման և հատկացման համակարգ:

Ճաշացուցակները կազմվում են «Դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ հիգիենայի պարագաների չափաբաժինները, հանդերձանքի, անկողնային պարագաների չափաբաժինները և դրանց օգտագործման ժամկետները, սննդամթերքի միջին և մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները սահմանելու մասին» Կառավարության 2023 թվականի փետրվարի 23-ի թիվ 245-Ն որոշման համաձայն: Մնուկը հատկացվում է նշված որոշման պահանջների պահպանմամբ, նախապես հատկացված ճաշացուցակի համաձայն՝ շաբաթական կտրվածքով և փոփոխվում է տարբեր շաբաթների համար՝ սննդի բազմազանությունն ապահովելու համար: Մասնավոր ընկերության կողմից ճաշացուցակները կազմվում են ազատազրկված անձանց մեծամասնության նախասիրությունների հաշվի առնմամբ, և հաստատվում են քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից: Ճաշացանկում նշվում են օգտագործվող սննդամթերքների քանակը և սննդի միջին օրական էներգետիկ արժեքը, որը, ըստ հաշվարկների, չպետք է պակաս լինի 2800 կիլոկալորիայից: Ճաշացուցակը կազմելիս պարտադիր հաշվարկվում և ստուգվում է սննդի կալորիականությունը:

Տարբեր հիվանդություններ ունեցող ազատազրկված անձանց համար դիետիկ սնունդ տրամադրվում է բժշկի կողմից տրված եզրակացության հիման վրա, ըստ որի՝ մատակարար կազմակերպության կողմից համապատասխան նոգոլոգիական խմբերի համար պատրաստվում են դիետիկ ճաշատեսակներ և մատակարարվում քրեակատարողական հիմնարկներ կամ այն բուժհաստատություններ, որտեղ այդ պահին գտնվում են տվյալ անձինք: «Աբովյան» ՔԿՀ-ում գտնվող մանկահասակ երեխաներին, մատակարար կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն, համապատասխան սննդի տրամադրումը և ճաշացուցակների կազմումը կատարվում է «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպա-իրավական ձևից) խամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» պահանջների պահպանմամբ: Ինչ վերաբերում է ազգային և կրոնական այլ պատկանելություն ունեցող ազատազրկված անձանց, ապա իրենց ցանկության դեպքում



մատակարար ընկերության կողմից տրամադրվում է տվյալ օրվա ճաշացանկից տարբերվող այլ ճաշատեսակ:

Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ սննդի ընդունումից հրաժարվելու նվազագույն ժամկետը կազմել է 1 օր, իսկ առավելագույն ժամկետը՝ 10-30 օր: Սննդի ընդունումից հրաժարվելու դեպքերը հիմնականում կապված են հանձնուրով սնունդ ստացած լինելու հետ: Քրեակատարողական բոլոր հիմնարկներում պահվող անձանց սննդից հրաժարված թվաքանակի ընդհանուր ցուցանիշը 2024 թվականի ընթացքում միջին օրական 2595 պահվող անձանց հաշվարկով տրամադրվող սննդից հրաժարվողների միջին օրական քանակը կազմում է 21 անձ: Դա նշանակում է, որ տրամադրվող սննդից օգտվում են շահառուների 99.2 տոկոսը և սննդի թափոններ գրեթե չեն առաջանում: 2024 թվականին սննդի ընդունումից հրաժարվելու դեպքերի թվային վիճակագրությունն ըստ քրեակատարողական հիմնարկների հետևյալն է.

Հ/Հ	Քրեակատարողական հիմնարկ	2024թ. սննդի օրական չափաբաժնից հրաժարման դեպքերի ընդհանուր քանակ (մարդ/օր)	Տարեկան կտրվածքով սննդի օրական չափաբաժնից հրաժարման դեպքերի օրական միջինգված թվային պատկերը (մարդ/օր)
1.	«Արթուրյան»	656	2 անձ
2.	«Երևան-Կենտրոն»	2327	6 անձ
3.	«Նուբարաշեն»	159	1 անձ
4.	«Սևան»	3328	9 անձ
5.	«Վարդաշեն»	1086	3 անձ

2024 թվականի ընթացքում ազատագրված անձանց հատկացված սննդի որակի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից բողոքներ չեն ներկայացվել և լրացուցիչ փորձաքննության կարիք չի առաջացել: Ինչ վերաբերում է ազատագրված անձանց սննդի հատկացման ճաշացանկի, մատակարար կազմակերպության կողմից հատկացվող պատրաստի սննդի ստացման, սննդամթերքի ցանկի, սննդի քանակի և որակի հսկողությանը, ապա Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ նշված գործընթացն իրականացվում է Արդարադատության նախարարի 2024 թվականի հունիսի 20-ի թիվ 354-Ն հրամանի համաձայն: Ըստ այդմ՝ ազատագրված անձանց մատակարարվող սննդի չափաբաժինների հսկողությունն իրականացվում է ամենօրյա ռեժիմով: Յուրաքանչյուր մատակարարման ժամանակ քանակի և որակի հսկողությունն իրականացնում է օրվա պատասխանատու հերթապահը: Վերջինիս ներկայությամբ ստուգվում և կշռվում է մատակարարված պատրաստի սնունդը, համտեսի և հոտի ստուգման ձևով գնահատվում է սննդի որակը, ստուգվում է յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համապատասխանությունը ճաշացանկով հաստատված չափաբաժիններին:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ազատագրված անձանց կողմից ստացված ահագանգերը՝ կարծում ենք, որ սննդի մատակարարների փոփոխման դեպքում պետք է քայլեր ձեռնարկել՝ հնարավորինս սահուն ձևով կազմակերպելու համար սննդի համային անցումները: Ինչպես նաև կարծում ենք, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել սննդի նախորդ և ներկա մատակարարների միջև փորձի փոխանակման համար՝ քննարկումներ ապահովելով ազատագրված անձանց հետ աշխտանքի և նրանց համար սննդի պատրաստման ու մատակարարման առանձնահատկությունների շուրջ: Բացի այդ, անհրաժեշտ է մասնավոր ընկերության կողմից սննդի պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու օրենսդրական կարգավորումներ և մեխանիզմներ նախատեսել: